ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԱԾՁԲ-6-2

ք. Երևան **28-ը սեպտեմբերի 2017թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամն, ի դեմս տնօրեն Ռ. Թոփչյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության **ընդհանուր գինը** կազմում է ***17,920,000 (տասնյոթ միլիոն ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:*** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Սույն պայմանագրով Պատվիրատուի կողմից նախատեսվում է կանխավճար՝ Պայմանագրի գնի 100%-ի չափով (17,920,000 (տասնյոթ միլիոն ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ), որը Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին 2017թ. դեկտեմբերի 1-ից՝ 5 բանկային օրվա ընթացքում: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ մատուցված Ծառայություններին համամասնորեն:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **8** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչություն:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 00867415 ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ՝ ՊԺԿ	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ ք. Երևան, Օրբելի Եղբայրների փողոց-22, «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ 2050042015181001 ՀՎՀՀ 00257269 տնօրեն
Կ. ԳԱՐԱՊԵՏՅԱՆ	Ռ. ԹՈՓՉՅԱՆ

Հավելված 1
N ՄԱԾՁԲ-6-2 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	Ռազմաուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման ծառայություններ (Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան Երևան Շոպրոնի 77)	**1-ին փուլ-ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ** 1) ՌՈՒՀ-ի կողմից ինստիտուցիոնա լիավատարմագրում անցնելու նպատակով ներկայացված դիմում-հայտի, դիմումին կից փաստաթղթերի ուսումնասիրություն, դիմում-հայտն ընդունելու կամ մերժելու մասին համապատասխան որոշման կայացում 2) ՌՈՒՀ-ում ինքնավերլուծության համար պատասխանատու խմբի անդամների (շուրջ 30 աշխատակիցներ) վերապատրաստումների իրականացում՝ հավատարմագրման չափանիշ-չափորոշիչների մեկնաբանում 3) ՈԱԱԿ-ի ձևաչափին և պահանջներին համապատասխան պատրաստված ՌՈՒՀ-ի ինքնավերլուծության և կից փաստաթղթերի փաթեթի թարգմանություն անգլերեն լեզվով 4) ՌՈՒՀ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի (ՌՈՒՀ-ի ինքնավերլուծություն և դրան կից փաստաթղթերի փաթեթ) նախնական ուսումնասիրություն և եզրակացության պատրաստում, ինքնավերլուծության ընդունման կամ վերադարձման վերաբերյա լորոշման կայացում 5) Հավատարմագրման գործընթացի համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող փորձագիտական խմբի ձևավորում տեղացի և միջազգային փորձագետներից և կազմի համաձայնեցում ՌՈՒՀ-ի հետ 6) Տեղական փորձագետների վերապատրաստումների կազմակերպում՝ գնահատման ժամանակակից մեթոդների կիրառման, ֆոկուս խմբերի հետ աշխատանքի և ՌՈՒՀ-երի առանձնահատկություններին համապատասխան գնահատում իրականացնելու տեսանկյունից **2-րդ փուլ- ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ / ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ/** 1) ՌՈՒՀ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծության և կից փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա ՌՈՒՀ-ի գործունեության նախնակա նգնահատում և ուժեղ-թույլ կողմերի վերհանում համակարգողի աջակցությամբ 2) ՌՈՒՀ-ի խնդիրների վերլուծություններին նվիրված փորձագիտական խմբի հանդիպում-քննարկումների կազմակերպում, ուսումնասիրման ենթակա լրացուցիչ փաստաթղթերի և հարցերի դուրս բերում 3) Փորձագիտակա նայցի պլանի և ժամանակացույցի կազմում, հանդիպումների ժամանակ վերհանման ենթակա հարցերի նախապատրաստում, ֆոկուս-խմբային հանդիպումների բովանդակության որոշում 4) Նախապատրաստական այց ՌՈՒՀ, ծանոթացում փորձագիտական խմբին տրամադրվող աշխատանքային պայմանների հետ, փորձագիտական այց իպլանի և ժամանակացույցի համաձայնեցում ՌՈՒՀ-ի ղեկավարության հետ 5) Փորձագիտական այցի հաստատված պլանին և ժամանակացույցին համապատասխան յուրաքանչյուր հանդիպման ընթացքում քննարկման համար նախատեսված խնդիրների համաձայնեցում միջազգային փորձագետի հետ **3-րդ փուլ- ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ** 1) Փորձագիտական այցի պլանով նախատեսված հանդիպումների կազմակերպում՝ նախատեսված հարցերի պատասխանները ստանալու նպատակով 2) Փորձագիտական այցի պլանով նախատեսված ռեսուրսների դիտարկում, այցելություն ստորաբաժանումներ և փաստաթղթերի ուսումնասիրություն՝ անհրաժեշտ տեղեկատվություն հավաքելու նպատակով 3) Ամեն օրվա ավարտին փորձագիտական խմբի փակ քննարկումների կազմակերպում, հավաքագրված տեղեկատվության և դիտարկումների ամփոփում 4) Նախնական գնահատման և այցի արդյունքների համադրում, տեղեկատվության ամփոփում և հավատարմագրման չափորոշիչների և չափանիշների համապատասխան ՌՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների գնահատում

2	Ռազմաուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման ծառայություններ (Մարշալ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան ք. Երևան Արշակունյաց 89)	**4-րդ փուլ- ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ** 1) ՌՈՒՀ-ի ինքնավերլուծության, կից փաստաթղթերի փաթեթի ուսումնասիրության և փորձագիտական այցի արդյունքում ձեռքբերված տեղեկատվության ամփոփում և փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի պատրաստում. Զեկույցը պարունակում է փորձագիտական խմբի դիտարկումների հիման վրա վերհանված փաստերը, խմբի դատողությունները, եզրահանգումը չափանիշներին բավարաելու վերաբերյալ և գնահատականը, ինչպես նաև փորձագիտական խմբի խորհրդատվությունները 2) Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի ուղարկում ՌՈՒՀ՝ դիտողություններ և առաջարկություններ ստանալու նպատակով. ՌՈՒՀ-ի դիտողությունները կարող են վերաբերել միայն զեկույցում տեղ գտած փաստերին, բայց ոչ դատողություններին կամ եզրահանգումներին 3) Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ ՌՈՒՀ-ի դիտողությունների և առաջարկությունների քննարկում փորձագիտակա նխմբի և ՌՈՒՀ-ի ներկայացուցիչների հետ 4) Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի կազմման վերաբերյալ ՌՈՒՀ-ում պատասխանատու խմբի անդամների վերապատրաստումների իրականացում և խորհրդատվությունների տրամադրում 5) ՌՈՒՀ-ի կողմից փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների քննարկումների արդյունքի հիման վրա վերջնական զեկույցի պատրաստում և ուղարկում ՌՈՒՀ 6) Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ՌՈՒՀ-ի ներկայացրած ծրագրի փորձագիտական գնահատում **5-րդ փուլ- ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՈՒՄ** 1) Հավատարմագրման կազմակերպման ընթացակարգերի պահպանման վերաբերյալ հաշվետվության կազմում 2) Հավատարմագրման հանձնաժողովին ներկայացվող փաստաթղթերի փաթեթի պատրաստում՝ ՌՈՒՀ-ի ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, ՈԱԱԿ-ի եզրակացությունը, ,Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ՌՈՒՀ-ի գործողությունների ծրագիրը,փորձագետների կարծիքը ծրագրի վերաբերյալ 3) Հավատարմագրման հանձնաժողովի նիստի կազմակերպում և ներկայացված արդյունքների հիման վրա որոշման կայացում 4) ԿԳ նախարարության համար նախատեսված փաստաթղթերի փաթեթի պատրաստում և ուղարկում ԿԳՆ՝ Հավատարմագրման հանձնաժողովի որոշում, հավատարմագրի ձևաչափ և ուղեկցող նամակ 5) ՌՈՒՀ-ի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում Հավատարմագրման պետական գրանցամատյանում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ
տնօրեն

Ռ. ԹՈՓՉՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑ

Հ/Հ	Ծառայության անվանումը	Հավատարմագրման ենթակա ՌԻՀ-ը	Չափման միավորը	Քանակը	Մեկ միավորի գինը ՀՀ դրամ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 31.10.2018թ.
Հավաստագրման ծառայություններ, այդ թվում			դրամ			
1.	Ռազմաուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման ծառայություններ	Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան Երևան Շոպրոնի 77	հատ	1	8,960,000	1
2.	Ռազմաուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման ծառայություններ	Մարշալ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան Երևան Արշակունյաց 89	հատ	1	8,960,000	1
	Ընդամենը				**17,920,000**	

Հավելված 2
N ՄԱԾՁԲ-6-2 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության անվանումը	CPV կոդը	Ընդհանուր գումար /դրամ/	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. համապատասխան դեկտեմբեր ամսին, բայց ոչ ուշ քան 20.12.2017թ
Հավաստագրման ծառայություններ, այդ թվում				
1.	Հավաստագրման ծառայություններ (Ռազմաուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման ծառայություններ)	79131200/20/1/1	17,920,000	17,920,000

Ըստ գնման ժամանակացույցի նշված ծառայությունների մասով պատվիրատուն վճարում է կանխավճար՝ դրանց գումարի 100 տոկոսի չափով, կանխավճարի տրամադրումը ս.թ. դեկտեմբերի 1-ից հետո 5 բանկային օրվա ընթացքում: Կանխավճարի վճարման և մարման կարգը սահմանված է պայմանագրի 4.2 կետով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ
տնօրեն

Ռ. ԹՈՓՉՅԱՆ

Հավելված 3
N ՄԱԾՁԲ-6-2 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ՄԱԾՁԲ-6-2 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն